

ԱԿՕՍ

Թ Ի Ի 9 5 7

5

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

2 0 1 4

Վանի մեջ վերաշինութեան ջանքեր

ՈՒՅԿԱՐ ԿԻԼԹԷՔԻՆ

uygargultekin@agos.com.tr

Հայոց 1915-էն առաջուայ ապրոումներէն մեր օրերուն հասած մշակութային ժառանգը անշուշտ որ սահմանուած չէ եկեղեցիներով: Հայապարկան բնակարաններ, ապարանքներ, դպրոցներ, աշխատանոցներ ու հողաբարածքներ ալ անտէրութեան մարտուեցան: Համարեա բոլոր քաղաքներէ ներս կարելի է հայոց հետքերուն հանդիպիլ: Անոցմէ մէկն է Մշոյ «Քալէ» թաղամասը: Մուշ քաղաքի հնագոյն բնակավայրը հանդիսացող այդ թաղամասի մէջ կային նախապէս հայոց պարկանած րտներ ու աշխարանոցներ: Սակայն քաղաքի այս պարմական հարուածը քաղաքաշինութեան գոհ դարձաւ, երբ քաղաքապետարանը ԵՕԿ շիրարարական ընկերութեան փրամադրեց փարածքը, որպէսզի հոն կառուցուի նոր բազմաբարկ շէնքեր:

Մեր արձագանգած այդ զարգացման ընդհակառակը կ'ապրուի Վանի մէջ: Աշխարհներ կը փարուի Վանի Կիրփինար (հայ՝ Հաւասոր) գաւառակի գիտերէն Ըջըք-



փինարի (հայ՝ Ուրթուկ) պարմական եկեղեցւոյ եւ կողքի րտներուն վերակառուցման համար:

Մուշ կը փլէ, Վան կը կերփէ

Եկեղեցին եւ րտները Վանի Կիրփինար գաւառակէն 40 Բմ. հեռաւորութեան գրնոտող Ըջըքփինար կամ պարմական անուով Ուրթուկ բնակավայրի մէջ են: Եկեղեցւոյ միայն մէկ մասը կանգուն է: Ան շուրջ 400 փարուայ շինութիւն է ու երկար փա-



րիներ օգտագործուած է որպէս ակսոռ եւ աղբանոց: Ճարդ չէ գրանցուած որպէս պարմական արժէք ունեցող հնութիւն:

Վանի «Եիզնիւնճի Եըլ» համալսարանի արուեստի պարմութեան բաժնի աշխատող, Օգնական Տոցենթ Մէիմէր Թօփ փարածքաշրջանի մէջ զանազան պեղումներ կը վարէ եւ յաճախ կ'այցելէ շրջակայ գիտերը: Այս այցելութիւններու միջոցին ան րեղեկանալով եկեղեցւոյ վիճակին, իսկոյն սկսած է բոլոր շինութիւններու գրանցման ու ապա նորոգման ծրագիրներ պատրաստելու գործին:

«Ալօս»ին կարարած յայտարարութիւններուն մէջ Թօփ կը նշէ, որ քրիստոնէական ճարտարապետութիւնը ուղղակիօրէն չ'առնչուիր իր ուսումնասիրութիւններուն: Այ-

սուհանդերձ, «Եկեղեցին, կողքի ապարանքը, րտները եւ ցորենի ամբարը իբրեւ կարեւոր նմոշներ, բաւական ուշագրաւ են» կ'ըսէ Մէիմէր Թօփ:

Ան դեռ կը յայտնէ թէ, որպէս առաջին գործ րեսակցած է Մշակոյթի Նախարարութեան պարասխանաքուներու հետ, պահանջելով որ եկեղեցին գրանցուի որպէս մշակութային ժառանգութիւն: «Կ'ուզեք որ Մշակոյթի Տնօրէնութիւնը շարժման անցնի: Այսրեղ թանգարանի րնօրէնութիւն ունիք, յուշարձաններու խորհուրդ ունիք, հասարակական կազմակերպութիւններ ունիք: Հեփրեաքար այդ րտըը պէքք է անպայման վերանորոգուի»:

Թօփ կը յայտնէ թէ փարածքաշրջանի մէջ հայկական ճարտարապետութեան բազմաթիւ նմոշներ կան ու պէքք է առաջնահերթութիւն փրուի մեծ եկեղեցիներուն պահպանման եւ վերանորոգման:

Հիւրեր-հրաւէրներ

** Թեհրանի Հայոց Առաջնորդ Տ. Սեպուհ Ս. Արքեպսկ. Սարգիսեան, Նորմիկիւրի իրադադութեան Ուսումնասիրութեան կեդրոնի կողմէ կազմակերպուած միջադգային Համագումարի մը մասնակցող Պարսկաստանի պատուիրակութեան հետ ժամանած է քաղաքը: Սրբազանը այս առթիւ մասնակեցեաւ 31 Օգոստոսին Գնայը կղզիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կայացող ՎաքըՔգիւղցիներու «Հարխայի Զատիկ» տօնակատարութեան: Առաջնորդ Սրբազանը այցելեց նաեւ Թերթիս խմբագրութիւնը եւ մանրամաս-*

նութիւններ փոխանցեց իր Վան այցելութեան, մասնակցած Համագումարին եւ առհասարակ Թեհրանի Հայութեան հոգեւրուն մասին:

** Իսկ անցեալ Ուրբաթ խմբագրատունս այցելեց Վանի Գեւաջ գաւառակի քաղաքապետ Հաքան Սինան, տեղեկացնելու Համար որ կը փափաքին 7 Սեպտեմբերին Վան եկող Հայ ուխտաւորներէն մինչեւ 100 հոգի հիւրասիրել Ոստան (Գեւաջ) քաղաքի տուններու մէջ: Հաքան Սինան որ նախապէս ալ Վան քաղաքի մէջ ստանձնած էր Հասարակական կազմակերպութիւններէ ներս վարչական պաշտօններ, սոյն տարուայ Մարտ ամսուն կատարուած շրջնալին վարչութիւննեւրու ընտրութիւնով նուսճեց Գեւաջի քաղաքապետութեան պաշտօնը:*



Կոչ զօրակցութեան

Այս սինակի յարատեւ ընթերցողները նկատած են որ վերջին շաբաթներու յօդուածները առհասարակ նիւթ կ'ունենային Միջին Արեւելքը՝ իր դժոխային առօրեայով եւ այդ դժոխքի մէջ ալ Հայ ժողովուրդը իր անմխիթար հոգեւրով: Այսօր եւս կը շարունակենք նոյն նիւթը, քանի որ դեռ հրեհը չ'է հանգած ու արժանի է բոլոր օրակարգերու առաջին հորիզոնականը դրաւելու:

Մեր լսած ամէն նոր լրատուութիւն մեր առջեւ կը պարզէ նոր վերլիշումներ, որոնց սարափով կը փորձենք խորհրդածել նոր լուծման եղանակներու մասին:

Հրեայ ժողովուրդը իր բազմահազար տարիներու թափառական տառապանքէն ետք Ի. դարուն մատուցեալ անխիղճ ու անխնայ ցեղապաշտութեան, որմէ վերջ իբր հարիւքէն ծնունդ առնող բարիք, տիրացաւ նաեւ աւետեաց երկրին ու հիմնեց իր պետականութիւնը: Այս անգամ հրեաներու Համար բարիք Համարուածը չարիք մը եղաւ Միջին Արեւելքի հնագոյն ժողովուրդներէն պաղեստինցիներուն Համար: Հօրոքօտտէն վերապրողները որդեգրած էին «Անգամ մըն ալ երբեք» կարգաթափը: Սակայն չխուսափեցան իրենց Համար անհանդուրժելի թուացող ուրիշներուն կերպրելէ: Այս սխալը կը ծագէր իր ազգը, իր ժողովուրդը, իր կրօնին դաւանողները մենաշնորհեալ Համարող անմարդկային զաղափարախօսութիւնէ: «Անգամ մըն ալ երբեք»ը միայն հրեաներու Համար կ'ըսուէր: Եթէ Իսրայէլի անասանութեան Համար պիտանի է, ոչ մէկ անպատեհութիւն կը տեսուէր նացիներուն 70 տարի առաջ իրենց դէմ գործադրածին հիմա իրենեց ձեռքով ուրիշներու դէմ գործուելուն մէջը:

Կարծես թէ Արեւմտեան Աշխարհն ալ 70 տարի առաջուան մեղքերը քաւելու եղանակը կը գտնէ այս անմարդկայնութեան զօրակցելով:

Նման արմատական ծայրայիղութեան դիմած է սուննի իսլամութիւնը: Անոնք ալ Արեւմուտքի դիմաց իրենց դարաւոր ընկճուածութենէն փրկուիլ կ'ուզէին աներկկացի լրագրողները գլխաւորելով: Այսպէսով ասպարէզ կարաացած կ'ըլլան աշխարհի հզօրագոյն պետութեան, ոչխարի նման կը մորթին անպաշտպան լրագրող մը ու այդ ոճիրին մեղքը կը վերագրեն Օպամային:

Այդ նոյն ոճրագործներու զոհը կը դառնան Քէսապի Հայերը, Շէնկալի էգտիները, Մուսուլի շիա թուրքմէնները, Ռոժապիլի ալէլի քիւրտերը, ուղղափառ եւ կաթողիկէ ասորիները, նեոսորականները, քաղզէացիները եւ դեռ զանազաններ:

Յատկապէս Շէնկալի էգտիներու դէմ գործադրուած վարագուութիւնը մեղ անգամ մը եւս իր տանի 1915-ի Մեծ եղեռնի դաժան տանջանքները վերլիշելու:

Եթէ մենք հայերս ալ պիտի չտաւուինք հրեայ ազգայնականներու անմարդկային Համոզումներով, ստիպուած ենք մեր մորթին վրայ զգալ բոլոր ժողովուրդներու տառապանքը: Այդ զգացումը մեզ պէտք է թնկաղբէ զօրակցութիւն: Ջօրակցել ինկածին, զօրակցիլ տուժածին, զօրակցել անիրաւուածին: Եւ զօրակցիլ առանց իկաւոր ունենալու ենթանալի ազգութիւնը կամ կրօնը:

Եթէ քանի մը օր առաջ նշեցինք Սեպտեմբերի մէկը՝ Համաշխարհային խաղաղութեան Օրը, պիտի գիտակցինք որ այդ խաղաղութիւնը ոչ աղօթքնեւրով պիտի կայանայ, ոչ ալ բարի մաղթանքներով: Խաղաղութիւնը վճռական պայքար կը պահանջէ եւ եթէ կը գրեմք հայրէն,թող մեզ արտօնուի որ պահանջենք այդ կոչի ամենաուժեղ հնչիւնն ալ հայրէննով արձագանգէ: Այս պայմաններու տակ անգամ մը եւս յիշեցնեք Միջին Արեւելքի էգտիներուն Հայաստանէ ներս զաղթին մասին: Թէ՛ արտատանջ իր հայրենիքը նոր աւելն կը ստանայ, թէ՛ էգտիները ապահով երկրի կը տիրանան:

pakrates@yahoo.com

Հալէպահայութիւնը կրակէ օղակի մէջ

ՎԱՀԱԳՆ ՔԵՇԻՇԵԱՆ

vahaknk@agos.com.tr

Հալէպահայութիւնը հազիւ թէ թօթափած Կպիտի ըլլար պատերազմի սաստկութեան պատճառած սարսափը, Սեպտեմբերի առաջին օրերուն անգամ մը եւս դէմ առ դէմ եկաւ թնդանօթաճգութիւններով ու բախումներով:

2 Սեպտեմբերի գիշերը Իսլամ Պետութեան ռազմիկները յառաջընթաց արձանագրելով գրանցին Սուլէյման Ալ Հալապի շրջանի ռազմավարական կարեւորութիւն

ունեցող շէնքերը: Բանակը ուղղաթիռներով եւ հրասայլերով փոխանակեց ու արգելք եղաւ ռազմիկներու յառաջացման:

Իսլամ Պետութեան հակակշիռի րակ գրնոտող Շէյխ իսըրըր եւ բանակին հակակշիռի րակ գրնոտող Սուլէյման Ալ Հալապի շրջաններու միջեւ անցնող ճանապարհի անվրանգութիւնը սքանձնող բանակի յաքուկ միատրումները կը դժուարանան ճանապարհը պահելու: 2 Սեպտեմբերի գիշեր ճամբան հաքող ԻՊ-ի ռազմիկները րեղատրուեցան Սուլէյման Ալ Հալապիի շրջանը:

Այս թաղի անմիջական հարեւանութեան մէջ կը գրնուի հայաշաք Միքան թաղամասը: Միքան նախապէս ալ յարձակումներու ենթարկուած էր եւ այժմ ուղղակիօրէն թիրախ դարձած է Շէյխ իսըրըրէն արձակուած հրասանդի ռումբերուն:

Աստրի իշխանութեան դէմ պայքարող իսլամականներու համար Միքանը շաք կարեւոր է դէպի Հալէպի կեդրոն յառաջընթացի առումով: Սակայն գրեթէ ակալարելի է այդ փարածքաշրջանը մընել, քանի որ հոն 4 հազարի շուրջ հայեր կը բնակին: Վախ կը փրիթ թէ ԻՊ-ի վերջին

յառաջընթացներէ եքք կրնայ կրկնուիլ Քէսապի սցենարը:

Պատերազմէն առաջ շուրջ 40 հազարի հասնող հալէպահայութեան թիւը այժմու ենթադրութիւններով 8 հազարի շուրջ է: Կառավարութիւնը ռազմավարական իմասք կը վերագրէ հայոց Հալէպի մէջ մնալուն եւ Միքան թաղամասը չթողելուն մէջ: Սակայն յայտնի չէ թէ այս թաղամասերը որքան կրնան դիմադրել րովանդակ Հալէպը պաշարող ԻՊ-ի եւ Ալ Նուրայիի հրասանդներուն ու արագաշարժ յարձակումներուն դիմաց:

Տաւութօղլու հայկական խնդրի շրջագծով

ՍԷՐՏԱՐ ՔՈՐՈՒՃՈՒ

serdarkorucu@hotmail.com

քաղաքականութեան խորհրդաքուններուն հետ: Այդ հանդիպման ընթացքին զգուշացուց Օպամայի խորհրդաքուն ըսելով որ «Ցեղասպանութեան պնդումները ճանչնալով մի՛ վիրաւորէք մեզ եւ մի՛ վրանգէք Թուրքիոյ հետ ռազմավարական համագործակցութեան ներուժը»:

Ցեղասպանութեան անհիմն պնդումները կանխելու համար

2007-ին երբ կը խօսուէ Հայաստանի հետ յարաբերութիւնները բնականոն դարձելու մասին, Տաւութօղլու Պաքուի մքահոգութիւններու դէմ կը պարզէր թէ գործընթացի բուն նպատակներէն մէկն ալ ցեղասպանութեան պնդումներու ուրացումն էր:

Ան այս ուրացումը շարունակեց սա խօսքերով՝ «1915 թիւը հայոց համար ցեղասպանութիւն կրնայ նշանակել: Բայց մեզ թուրքերուն՝ Չանաքքալէն կը յիշեցնէ»: ԱՄՆ-ի եւ Թուրքիոյ միջեւ երբ լարուածութիւն կը սրուէր ու երբ Թուրքիա եք

կը կանչէր Ուաշինկտնի աւագ դեսպան Նամըք Թանը, Տաւութօղլու կը շարունակէր վճռական մնալ.- «Ցեղասպանութեան բանաձեւի դէմ Թուրքիոյ խորհրդարանը, իշխանութիւնով եւ ընդդիմութիւնով միասին պիտի առարկենք, քանի որ այս մեզի համար ազգային արժանապաքությունն խնդիր է»:

2010-ի Մարքին Շուէքի խորհրդարանը մէկ ձայնի փաքբերութիւնով ընդունեց Հայոց ցեղասպանութեան բանաձեւը: Տաւութօղլու շաք բարկացաւ այս զարգացումին ու պնդեց, թէ այս պարահաձները Թուրքիայէն վրէժ լուծել ուզող շրջանակներու խառնակշիութիւն է:

Աքր. Գործ. Նախարար Տաւութօղլու երբեմն ալ շաք լուրջ դժուարութիւններու ենթարկուեցաւ: ՃՀՓ կուսակցութեան ազգայնամոլ պարզամատրններէն Ճանան Արըթմանի Թուրքիոյ մէջ փախստական դիրքի մաքրումա հայասրանցիները արդարեւոր առաջարկը մերժուած էր Տաւութօղլուի կողմէ,

Կանխաւ զգուշացնեմ, այս գրութիւնը երկօրեայ միջոցառում մը թղթակցի աչքով ընթերցողին փոխանցելու նպատակը չի հետապնդեր։ Ես որպէս Վարքֆիլդցի, իմ տպատրութիւններս ու զգացումներս փոխանցեմ թուղթին։


Գնալըի նաւամարոյցը երկու ձողի միջեւ պարզուած «Վարքֆիլդցիոյ խնջոյք» վերաբառութիւնը ուրախութեան, յուզումի ու երախտապարտութեան զգացում մը ըլլալով կը պատէ զիս։

Խրախճանքի համար ճշդուած ժամուն, երբ կը հասնիմ նկերեցոյ բակը, կը տեսնեմ խոտներամ բազմութիւնը։ «Եղան, այս գործը կը յաջողի» կը խորհիմ ներքուստ։ Նոյն պահուն միտքս կը թռչի 17 տարի ետ։ 1997-ի ամառուայ վերջատրութիւնն էր։ Վարքֆիլդցիոցիներու պաշտած երիտասարդ Մեսրոպ Սրբազանի կարգադրութեամբ, դարձեալ Վարքֆիլդի հովեր անցած էին Գնալը կղզիէն։ Այդ օրը եւ Մեսրոպ Սրբազանը յիշելով թախիծ մը կը պատէ զիս։ Յանկարծ բարեկամ մը ուսիս կը դպի ու ես կը վերադառնամ պահը ապրելու։ Ասորւած իմ որբան շաք ծանօթ, բարեկամ... Կը ձեռնովնք, կ'ողջագրուիմք։ Շարերուն հետ երկար ժամանակէ ի վեր չենք հանդիպած։ Կարօքակէզ հարցումներ, հարցումներ...։

Երկօրեայ միջոցառման ամենածանր բեռը խումբ մը ընկերներուն հետ սրանձնողը Միհրան Ուկկեանն է։ Վարքֆիլդցիոցիներու համար մի այլ հարազատ ու սիրելի անձնատրութիւն։ Բացման կարճ ճամ մը կ'արտասանէ ու խրախճանքը կը սկսի։ Միջոցառման երաժշտական բաժինը յանձնուած է «Ոմանք» խումբի անդամներ Լարա Նարին, Իլքեմ Պալսէն, Ռուբէն Մէլքիսէթօղլու, Սարօ Ուսթա, Սեւան Կարապետօղլու եւ Արի Հերկէի։

Բակի հեռաւոր անկիւը տեղադրուած երկաթեայ եռօրանիները ու անոնց վրայ զետեղուած հսկայ պղնձեայ կաթասները 1200 քմ. ճամբայ հարթելով հասած են հոս։ Բոցավառող կրակէն քամիի ազդեցութեամբ մերթ ընդ մերթ ժայթքող կայծերը ալ անելի տպաւորիչ կը դարձնեն Գնալըի այս գիշերը։ Կարծես քանի արագանայ երաժիշտներու կատարումներու կշռոյթը, կրակն ալ անոր համապատասխան կը հրահրի ու կարծես բոցերը մասնակցի կ'ուզեն ամէն տարիքէ մարդկանց մէկտեղումով գոյացած խանդավառ շուրջպարին։

Կը նշմարեմ երիտասարդ մայր մը, որ իր հետ կը քաշէ երեք փոքրիկ մանուկները ու կը մասնակցի շուրջպարին։ Կ'ուզեմ ձերբակալել այդ պահը։ Բայց մինչեւ որ լուսանկարի գործիքս պայուսակէն հանեմ ու նկարեմ անոնք կը հեռանան իմ



Վարքֆիլդի խրախճանքէն տպաւորութիւններս

ՄԻՍԱԿ ՀԵՐԿԵԼ

տեսանկիւնէն։ Չեմ ափսոսար, կը վայելեմ պահի երջանկութիւնը։ Խոստովանիմ որ այս ուրախ տրամադրութեան պատրաստուելուն մէջ դոյզն իսկ բաժին չեմ ունեցած։ Բայց ինչ փոյթ, սա Վարքֆիլդի խրախճանքը չէ՛։ Ես ալ վարքֆիլդցի մը չեմ։ Երանի մեր բոլոր գիտացիները այսօր, այս ժամուն Գնալըի այս բարձունքը ըլլային։

Պարփիմ նշել որ այս ուրախութեան մէջ մեծագոյն բաժինը կը վիճակի «Ոմանք»ի

երաժիշտներուն։ Որպէս վարքֆիլդցիներ երախտապարտ ենք իրենց։

Հազի ցերեկուայ մօտ առիթը ունեցայ բերնէ բերան լեցուն տաճարէն դէպի ներս գլուխ երկարել։ Ապա ուղղուեցայ Կազդուրման Կայանի խաղավայրը, որ կը կրէ բարերար Գրիգոր ճամբագնանի անունը։ Սիրոյ սեղանը՝ որուն քիչ յետոյ պիտի բոլորուինք շուրջը, այս խաղավայրին

վրայ սարքուած է։ Գիւղէն ժամանած երիտասարդներուն մէկ մասը, ճամբարի վարիչներն ու աշխատողները, Վարքֆիլդի Հայրենակցական միութեան փիկիներն ու օրիորդները եւ այսօրուան համար կղզի եկած կամաւորներ լծուած են տրնաջան աշխատանքի, որուն հետեւին իսկ յոգնեցուցիչ է։

Երկօրեայ միջոցառման աւարտին բեմ պիտի բարձրանան Վարքֆիլդցիոյ պատանիները։ Այս ելոյթը անոնցմէ շարերուն առաջին բեմի փորձութիւնն է։ Կը փորձեմ կարելի եղած չափով հանդարտեցնել իրենց յուզումը։ Վերջին պահուն կը մտաբերեմ, «Ո՛վ պիտի ներկայացնէ երգչախումբը, կամ ո՛վ հակիրճ ծանօթութիւններ պիտի տայ այս պատանիներուն յարուկ պայմաններուն կամ

երգերու ընտրութեան եղանակին մասին»։ Օրուայ խօսնակը ճամբարի երիտասարդ տնօրէնուին է՝ Թամար Ներկիս։ Կապախիմ հիւրամեծարութեան արարակարգ օրինակ մը հանդիսացող Ներկիսի օգնութեան։ Բայց ան կը յաջողի համոզել որ ես կատարեմ այս պատրականութիւնը։ Ես որ քիչ առաջ պատանիներու յուզումը հանդարտեցնել կը ջանայի, սա պահուն չեմ կրնար կանխել ծունկերուս դողացումը։

Ապա կը սկսի օրուայ յայտագիրը։ Աղօթք, բացման խօսք, նախագիծի ծանօթացում ու ապա ազդարարութիւն մը ես՝ զիս կը կանչեն։ Ինչ ունիմ որ ընելու։ Յրուած գացած են սա վերջին վայրկեաններուն միտքիս մէջ շարահիստուած նախադասութիւնները։ Կը դիմեմ յանկարծաբանութեան եւ կը զգամ որ խաղաղած եմ։ Կ'աւարտեմ խօսքերս ու երիտասարդները բեմ կը հրաւիրեմ։ Բեմ որ կ'ըսեմ, իրականութեան մէջ պարտեզը խոհանոցին կապող ասփճաններն են, որոնցմէ կ'օգտուին նաեւ մարտիցողները։ Իսկ խումբին առջեւ միայն մէկ հապ բարձրախօս կայ, ան ալ չ'աշխատիր։ Ես զիս կը միխթարեմ խորելով թէ զիսաւոր նպատակս այս տղաքը Պոլիս բերել եւ պոսեցի մեր ազգակիցներուն ապացուցել էր, որ Վարքֆիլդի մէջ երիտասարդութիւն ալ ունինք։ Ահա ձեզ գարնան ծաղիկներու նման փունջ մը շողշողուն երախայ, որ կ'երգեն նաեւ գերագանցելով իմ անկալածը։ Միթէ՛ այս պահուն շաք կարեւոր է ձայներին կը լսուի, կամ ոչ։

Բայց կը լսուի։ Տղաքը հետգիտել անելի ոգետր կ'երգեն ու երբ կ'աւարտի իրենց ելոյթը, կ'արժանանան բոլուն ծափահարութեան։ Ծափողոյններու հեղեղին մէջ կը հեռանան, իբրեւ բեմ ծառայող ասփճաններէն։

Աթէշեան սրբազան հուսկ բանք կ'արտասանէ եւ սիրոյ սեղանին մասնակիցները կը սկսին ցրուի։ Մասցողները փոքրիկ խումբեր կազմած կը շարունակեն ցրոյցի։ Ես ալ կը մասնակցիմ այդ խումբերէն մէկուն։ Ձիս ալ կը շնորհաւորեն ու ես ալ շնորհակալութեամբ կ'ընդունիմ այդ շնորհաւորանքը առանց համետրութեան ճիգեր վաւերելու։

Բարեկամ մը հարց կու տայ. «հաւաքուած գումարը գոհացուցիչ չեղաւ, այսքան յոգնութենէ ետք հիասթափուած ես»։

Քիչ մը փիլիսոփայական, քիչ մը կատակախառն, բայց ամբողջ մտերմութեամբ կը պատասխանեմ՝ «Ինչո՞ւ հիասթափուիմ, ինծի համար բարոյականը կը գերազանցէ նիւթակահին։ Ես ամբողջ կենսոյիս մէջ փողի ետեւէն չեմ վազած։ Փող ըսածդ ինչ է որ՝ ձեռքի կեղտ»։

Յետոյ կը հանդիպիմ երկօրեայ յոգնութենէ ու քնափութենէ տառապող բարեկամի մը, որուն կը միխթարեմ հետեւեալ խօսքերով՝ «Այս կարգադրութեան մէջ մեր ամենամեծ յաջողութիւնը զայն աւարտած ըլլալն է։ Անցեալ ըլլալ բոլորիս։ Նպատակը գոյացած է, չէ՛ որ ամէն ինչ Վարքֆիլդի համար է»։



Խաղաղութեան կոչ՝ Մամաքի բարձունքէն

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՐԻԳԵԱՆ

pakrates@yahoo.com

Այս անգամ մեր ճամբան կը հասնի Անգարա, մայրաքաղաքի Մամաք թաղամասը, որ կը յիշեցնէ Իսթանպուլի «Կազի», «Օրմէյարնը», «Արմուլթու» ընդհանրապէս իրենց ձախակողմեան ու ընդդիմադիր հակումներով ծանօթ այլեւիաբնակ թաղամասերը։ Մեր այցելութեան դրդապատճառն է Սեպտեմբերի 1-ը կամ ալ Համաշխարհային Խաղաղութեան օրը։ Նշենք որ անցեալ տարի նոյն նպատակով, բայց ուրիշ խմբակցութեան մը հրաւերով անգամ մը ես այցելած էիք Մամաք։

Վերջին տարիներուն նկատի ունենալով Միջին Արեւելքի մէջ տիրող պատերազմի իրավիճակը, խաղաղութեան օրի յիշատակումը ալ անելի էական բնոյթ ստացած է։ ԶԼՄ-ները անընդհար կը

փոխանցեն պատերազմի վայրագութեան սահմուկեցուցիչ պատկերներ, որոնց կարելի չէ անտարբեր մնալ։ Թերեւս ալ այդ դրդումով 31 Օգոստոսի երեկոյեան հոմ բազմութիւն մը հաւաքուած է Թուզու-չայրքի Աշուլ Ֆէլզուլլահ Չընարի գրասպին, որուն մէջ փոքր գրադարան մը կայ ու կը կրէ «Կէզի» գրասպինի ապստամբութեան օրերուն սպանուած էթիւմ Սարըպիլիի անունը։ Այգիի մուրքին ցուցաբախակի մը վրայ նշուած է նաեւ այդ նոյն ապստամբութեան օրերուն Էսկիշէիիի մէջ ոստիկաններու եւ անոնց գորակցող ֆաշիստներու դաժան ծեծով սպանուած Ալի Իսմայիլ Բորքմազը։

«Աստուրուի կնոջ շարժում» հարթակի գլխատրութեամբ եւ բազմաթիւ հասարակական կազմակերպութիւններու գորակցութեամբ կայացող ձեռնարկը կ'ընդգրկէ երեք երգչուիներու երաժշտական ելոյթը եւ 14 զեկուցողներու մասնակցութեամբ ալ

ասուլիս մը։

Ուշագրաւ զանազանութիւն մը կայ ասուլիսի մասնակիցներու միջեւ։ Հոն եւս չեն անտեսուած «Կէզի»ի նահապալկները, քանի որ իրաւիրեալներուն մէջ է Աթթարիոյ մէջ սպանուած Ամիէր Աթթաքանի հայրը՝ Ալի Աթթաքան։ Ռոպոսքիի կոտորածին զոհուածները ներկայացնելու համար եկած է Ֆէր-հաթ Էնճու։ Պաղեստինը կը ներկայացնէ Կազգալէն ժամանած Սամահ Սալէի, իսկ Միա Թամարին խորայնացի մարդու իրաւունքներու պաշտպան մըն է։ Համաշխարհային Խաղաղութեան կու-միտէն կը ներկայացնէ Էրուարթօ Կոնզալէսը։ Միջոցառումի ամենէն աչքառու դէմքերէն մէկն է անուանի քիզայեր եւ ծանօթ հասարակական գործիչ Պարպարոս Շանսալ, որ միաժամանակ կը ներկայացնէր հասարակութեան մի այլ արհամարհուած հատուածը՝ միասեռականները։

Ի դէմ այսքան մեծ թիւով զեկուցողներու, ներկաները լարուած ուշադրութեամբ հետեւեցան բոլոր ելոյթներուն։


Անշուշտ կարելի է հարցնել թէ այս բոլորը վերջին հաշուով ինչ նպատակ պիտի ունենան տիրող այս դաժան վայրագութիւնը կանխելու համար։ Կարելի է նաեւ այս հարցումով վիտրիլ, բայց մենք կրկնենք այն միտքը, որ արտասանած էինք մեր ելոյթի ընթացքին «Որքան ալ հակասական թուի, խաղաղութեան տիրանալու համար ստիպուած ենք անվարան կռուելու, քանի որ խաղաղութիւնը ոչ մաղթանքով պիտի կայանայ, ոչ ալ աղօթքով»։

Մենք ականատեսի վկայութեամբ հաստատենք, թէ 31 Օգոստոսի երեկոյեան Մամաքի այդ համեմար գրասպինի մէջ մէկտեղուող հասարակութեան կամքը եթէ գործադրութեան գտնէ, պատերազմը առաւել կը հեռանայ աշխարհի երեսէն։


ԱԿՕՍ



Սէփաթ Ամար



Տողան Չէլիք
ԼՈՒՍՆԱԿԱՐ՝ ՊԵՐՏ ԱՐԱՊԵԼՆ



Ռամին Ֆարիսանկիյա
ԼՈՒՍՆԱԿԱՐ՝ ՄԻԻՐՆԱ ՄԱՆՈՒԿԵԼՆ

Այս օրերուս ունկնդրեցինք երեք ալպոմներ, որոնք բոլորովին փարբեր երաժշտական ոճեր ներկայացնելով հանդերձ թողուցին նոյն փալատութիւնը, որն է երաժշտութեան փիեզերականութիւնը: Ինչ փոյթ որ անոնցմէ երկուքը խիստ շրջանային էին ու կը ցոլացնէին որոշ մշակոյթի մը ելեւէջները:

Բառերը հասկնալը որքանով կարեւոր են

Մեր լսած առաջին ալպոմը եղաւ փերսիմցի Տողան Չէլիքի վերջերս «Քալան» ընկերութեան կողմէ հրապարակուած հեղինակային խորասալիկը՝ «Ջեուզ» (Անէծք): Միայն մէկ բացառութեամբ բոլորն ալ իր յօրինումներէն բաղկացող ալպոմին մէջ երկրասարդ երգահանը կը ներկայացնէ իր ժողովուրդի բազմադարեան մշակութային աւանդը: Ինք գրած է նաեւ այդ երգերուն խօսքերը, բոլորն ալ զազայեռէն լեզուով: Տողանի երաժշտութիւնը լսելու պահուն խիստ հասկնալի կը դառնայ այն համոզումը, ըստ որու «անաղարք» երաժշտութեան մէջ բառերը հասկնալը կամ չհասկնալը այդքան մեծ նշանակութիւն չունի: Ունկնդրողը կրնայ զազայերէն չիմանայ, բայց անհաւաքալի հարազատութեամբ կը ներթափանցէ Տողանի երգերու աշխարհին: Արդէն երգիչ երգահանի գլխատը նպատարն ալ այդ է: Տէրվիշի մը նման շրջիլ մարդկանց մէջ, դաչիլ անոնց սրբերուն, բան մը փոխանակել իր փառապանքէն կամ ուրախութենէն եւ փալատութիւն մը թողուլ այդ դաչածներուն մօտ: Եթէ այս է արուեստագէտին նպատակը, մենք անվարան համոզուած ենք որ ան յաջողած է իր ուխտած նպատակին մէջ:

Մեր երաժշտութեան փարբերակները

ԱՂԱՐԻ ՄՈՒԹԱՖԵԼՆ

Արժանի կերպով ծառայած է իր պապենական մշակոյթին, ու յաջողած՝ այդ բազում փարիներու իմաստութեամբ ձեւաւորուած փարածքով փոքր, բայց խորիրդով մեծ մշակոյթին մեր ժամանակներու եւ իրեն յափուկ դրոշմը դնել:

Ընդելուծուի նուագարանի հեք

Առաջին անգամ երեք փարի առաջ Պաթման քաղաքի մէջ հաճոյքը ունեցած էի վայելելու Սէփաթ Անարի յանկարծաբանութիւնը: Պաթմանի, անմոռանալի շարժանկարի նկարահան Ելմազ Կիւնէի անուը կրող շարժանկարի սրահին մէջ կը ցուցադրուէր Հայաստանի առաջին գեղարուեստական շարժանկարը՝ «Ջարբ»: Համօ Բէկնազարեանի կողմէ 1926-ին նկարահանուած այս ֆիլմը այդ փարիներուն պայմաններուն համաձայն անձայն էր: Յուցադրութեան կազմակերպիչները այս ֆիլմին համար հրապիրած էին անուըն անյայտ երաժիշտ մը: Անգարայէն եկած այս երկրասարդ մարդը պատարափ կողքին ծալապարիկ նստալ գետին ու ֆիլմին հերելելով ամբողջ ցու-

ցադրութեան փելողութեամբ յանկարծաբանութեամբ նուագեց ցուցադրութեան պարշածող եղանակներ:

Անարքին խանդավառութեամբ մօտեցայ ու շնորհաւորեցի զինք: Համեստութեամբ շնորհակալութիւն յայրենեց: Պարզուեցաւ որ Ուրֆա ծնած է, բայց համալսարանի ուսման համար այժմ կը բնակի Անգարա: Իսկ ես կը հեքարքրուէի այդ յանկարծաբանութեան մէջ մերթ ընդ մերթ յարակցող Կոմիքաստեան մեղեդիներով: Ան պարասխանեց՝ «Նախքան զալս, ունկնդրեցի Չիլինկիրեան քառեակի կալարումները...»:

Երկրասարդ նուագածուն ժամանակի ընթացքին ալ աւելի փրիապետած կ'երեւի իր նուագարանին: Մանթօրը ինն ու աւանդական նուագարան մը ըլլալով հանդերձ ժամանակակից առումով չէ մշակուած եւ ուսուցման համար յափուկ կանոն մըն ալ չունի Թուրքիոյ մէջ: Այդ իսկ պարճառա Սէփաթ Անար իր արուեստին մէջ ընդունալու միտումով բազմիցս այցելած է Պարսկաստան եւ սանթուրի լայն գործածութիւն ունեցող այդ երկրին մէջ աշխատած է փեղացի կարետը վարպետներ՝

Նավիւր Փիքմուհամմէտի եւ Ճավիւր Մուսափուրի հետ: Ան աշխատակցած է նաեւ Արաշ Ռույկարփանի հետ, որ անուանի դափահար (Էրպանէ նուագող) մըն է: Անար արեւելեան երաժշտութեան այս ճոխ կուտակումը ունկնդրողներուն կը ներկայացնէ «Պելակար» (ճարտասանութիւն) անուն ալպոմով:

«Մուկամ»ը՝ մեր սիրելին

Եթէ Տողան Չէլիքի յօրինումներով շրջեցանք Տէքսիմի լեռներն ու ձորերը, եթէ Սէփաթ Անար մեզ փարաւ Պարսկաստանէն մինչեւ Հնդկաստան երկարող Մեքարսի ճամբաներով, այս անգամ Ռամին Ֆարհանկիյա կու գայ Հարասային Կովկասեան լեռներէն մինչեւ Կասպից Ծով երկարող սիրոյ երգերով մեզ սփոփելու: Իրաւ ալ սփոփիչ անորորութիւն մը կը փրէր Ռամինի թէնոր ձայնին մէջ: Ան կը սիրէ իր երկիրները: Սովորական չէ երկիր բառի հոգնակի գործածութիւնը, բայց ինչ ընես որ մեր աշխարհագրական հատուածին մէջ այնքան ալ փարօրինակ երեւոյթ չէ:

ԲԱՌԵՐՈՒ ԽՈՐՀՐԱԴՈՐ ԱՃԽԱՐՅԸ

132

ԼՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԼՆ
ndaduryan@agbumhs.org

ԳԵՐԵԶՄԱՆ Գովերգներու Բնակարան

«Եռաբլուրի սալաքարերին վրայ գդոյշ «Եպիտի քալել: Սա Ղարաբաղեան պարերագմի օրերուն, ես զինադադարի ժամանակ ինկած 800 ընկերների, քաջարի ազաւորամարտիկների գերեզմանն է. Հայոց Զօրավարին ու Սպարապետին գերեզմանն է: Սա սուրբ հող է»:

Խօսողը Եռաբլուր գիւնտորական ազգային գերեզմանապան մէջ 33 հոգինոց աշակերտական խումբին հայրաքար բացաւորութիւններ փուղ կապիտան Պարոն Ալբերտ Առաքելեանն է: Պարոն Առաքելեանը, վաթսուներեց մարդ, իր բարձր հասակով, գիւնտորական համազգեստով, պիտը մարմնով ու առոյգ խօսակցութեամբ բոլոր աշակերտներուն վրայ կը ձգէ մեծ փալատութիւն: Պարոն Առաքելեանին շեշտը այնքան զօրատը է եւ թունդ, որ բարեկամին կու փայ վարաւորութիւն, իսկ թշնամիին՝ սարսափ: Պարոն Առաքելեանը կը հպարտանայ երբ կ'անցնէ, թէ հոն թաղուած է նաեւ... իր հայրը:

Եռաբլուրը Հայաստան այցելող օտարազգի զբօսաշրջիկներու ուղեգրութեան վրայ

շար անգամ չ'երեւիր: Բայց ամերիկահայ վարժարանի աւարտական դասարանի աշակերտներու այս խումբը, դէպի հայրենիք կարարած ճանաչողական շրջապտոյտին առաջին օրը, եւ դեռ առաստընեան առաջին ժամերուն, կ'այցելէ այս «Սուրբ հող»ը, սպիտակ մեխակներ կը գետեղէ գերեզմաններուն վրայ ու երբ պահ մը կը հանդիպի հերոսներու դէղնած լուսանկարներուն՝ կը տեսնէ փրեկից դէմքեր:

Աշակերտներէն մէկը կը մօտենայ. –Պարոն, դուք մեզի իններորդ դասարանին խօսք մը սորվեցուցած էիք, անիկա յիշեցի. «Մահի ո՛չ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»:

Բոլոր աշակերտները կը մընեն գերեզմանապան մաքուրը: Մոմեր բռնած՝ միաբերան կ'երգեն. «Տէր, Ողորմես»:

Նենաք այսքան ընկճուած փրամադրութիւն ունենալու:

«Գերեզման»ը պարսկերէն փոխառութիւն է եւ կու գայ «Գարագման» բառէն: Պարսիկներու մօտ «Գարագման»ը «Բարձրագոյն երկինք»ն է, գաղափար մը, որ եկած է գրողաշարական հաւաքըն: Պարսկերէսի հնագոյն հոգեւոր գրութիւններուն մէջ բառը «Գարօ-նման» էր եւ բուն կը նշանակէր «Գովերգներու Բնակարան», ուր կ'ապրէր Անուրա Մագրան (հայոց դիցաբանութեան մէջ՝ Արամազդ) իր օրինեալ հրեշտակներուն հետ: Սիրելիներ, զրադաշտ պարսիկները, ինչպէս նաեւ մենք, մահը դիտած ենք որպէս անցում: Ան վերջ չէ, այլ՝ սկիզբ: «Գերեզման» բառը հարստացուցած է նաեւ մեր լեզուն. գերեզմանափոր, գերեզմանապեղ, գերեզմանագործ, գերեզմանակուր, գերեզմանակրկիւր, գերեզմանատէր, գերեզմաննոց, գերեզմանատուն: Բայց ամենէն նողկալին՝ «գերեզմանապիղծ» ըլլալն է, անգիտակցելով, թէ գերեզմանապան բոլոր բարեպաշտ բնակիչները կը բնակին երանելի փեղ մը, վայրենի վիժմակներու աղաղակներով գալ ու վայրագօրէն աւերել քարերը:

Կը տեսնէ՞ք, մենք երկնային կարետը բառ մը, կամ գաղափար մը իշեցուցեր ենք երկիր ու փուրեր՝ մեր հանգուցեալներու ծառայութեան: Պարմաբան մը ըսած

Ես Ամերիկայի հերոս Սիւպերմէնն եմ եւ երկինքը կը թռչիմ, իսկ դուն ո՛վ ես:

Ես ալ Յայաստանի հերոս Գերեզմանն եմ, մարդկանց հոգիները երկինք կը տանիս:



է, թէ հայերու մօտ «գերեզման» բառը հեզնական իմաստ ունի, ան կը ծաղրէ մահը: Խումբը դուրս կ'ելլէ մաքուռն եւ ինկած փրամադրութիւններէն: Աշակերտներէն մէկը, փաքարին փղայ, կ'անմահացնէ Մկրտիչ Պէշկիթաշլեան բանաստեղծը, անգերեզման թաղուած հերոսներուն համար կ'արտասանէ «Թաղումն Քաջորդայն»էն պարափկներ... «... Ու չերգեցինք ողբի երգեր սրբայոյզ՝ «Երբ պարանայն բացինք մըռայլ փոսին դուռ...»:

«Պէտք չէր դագաղ, եւ ո՛չ ճերմակ պարաքներն»
«Որով գոցուէր ազաւորորի քաջորդին»
«Նա յեւ մարտին կարծես յոգնած կու հանգչէր»
«Ու վերաբուռն կարմիր՝ բաւեր իւր անձին»
«Բայց երբ զըլուին ի բարձ դըրիսք հողաշէն»
«Տեսանք ըզգեղ ճակտին ու վերքըն պայծառ...»: